

**ԿԵՆՌԱՆԻՆԵՐԻ ԵՎ ԲՈՒՅՍԵՐԻ ԱՆՁՆԱՎՈՐՈՒՄԸ  
ՀԱԿՈՒ ՄՆՁՈՒՐՈՒ  
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ\***

**Բանալի բառեր** – Մնծուրի, Երզնկա, Արմտան, պատմվածք, գյուղացի, արտ, այգի, հայրենի եզերք, պատկեր, հուշ, կենդանիներ, բուսականություն, անձնավորում, զրուցել:

Սփյուռքահայ գրականության դասական հեղինակներից մեկի՝ Հակոբ Մնծուրու (**Հակոբ Տեմիրճյան**, 1886–1978) գրականությունը մարդու և աշխարհի բազում պատկերներ ու գեղեցկություններ է պարունակում: Գրողին Մնծուրի գրական անունը, որը նրա հայրենի լեռնաշղթայի անվանումն է և «խարկված, այրված» է նշանակում, տվել է արևմտահայ հայտնի մտավորական, գրող Օսնիկ Չիֆթե-Սարաֆը (Հովհաննես Աբիտողունյան)՝ իրեն էլ մկրտելով Հովհաննես Ասպետ գրական անունով: Եթե անգամ հայրենի լեռնաշղթան այդպես չկոչվեր, միևնույն է, Մնծուրին այդ «**մնծրված**» բառին հոմանիշ մեկ այլ գրական անուն պիտի ունենար, քանի որ այն մոխրացնող կյանքը, որ վիճակվել էր նրան ու իր ժողովրդին, իրական այրման ու անկման ողբերգական մի մեծ պատմություն եղավ: Մնծուրու գրականությունը Համաստեղի (Համբարձում Կելենյան) ստեղծագործությունների հետ միասին արտացոլեց հայոց կյանքի մի կարևոր շրջան, որն ընդգրկեց 20-րդ դարի վեց-յոթ տասնամյակներ՝ լի, չարենցյան խոսքերով ասած, «**անկումների սարսափներով**» ու նաև հայ աշխարհի անանց և մնայուն արժեքներով:

Երկու գրողները եղան վերջին վկաները մի կյանքի, որն ընդհատվեց 1915 թ. եղեռնով, և որոնք իրենց գրականությամբ կանգնեցրին հավերժական պանթեոն, որում, ի տարբերություն հռոմեացիների կառուցած

Վե՛մ համահայկական հանդես, ԺԵ (ԻԼ) փարի, թիվ 1 (81), հունվար-մարտ, 2023

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 02.02.2022:

պանթեոնի (որը նվիրված է նրանց երկնային աստվածներին), աստվածները երկրային են, և նրանք արևմտահայ աշխարհն ու մարդիկ են: **«Մեր տեղահանությունն առաջ իմ գիտցածներս են, որ կպատմեմ: Անկե հետո՝ ո՛վ մնաց, ով ի՞նչ եղավ՝ չեմ գիտեր»**<sup>1</sup>, - վկայում է Մնծուրին իր «Թեփթացի Ղըմըլը» պատմվածքում: Իսկ մեկ այլ առիթով գրում է, որ ինքը **«պետք է որ անոնք շարունակե»**, այն է՝ նրանց վերապրեցնի, շարունակել տա: Եվ, իրոք, Մնծուրու պատումն այնքան կենդանի է, որ ասես ապրող մարդկանց ու ապրող երկրի մասին է գրում:

Մնծուրիական գրականության առանձնահատկություններից մեկը, ինչպես նշում է գրողն ինքը, իր կենսագրության առկայությունն է: Նրա ամեն գրածի մեջ ներկա է ինքը և կամ վկան է: Եվ ուրեմն Մնծուրու գրականությունն իր ամբողջության մեջ մոռացության գրկից տունդարձի խոսք ու վկայություն է, իր **«արմտաներենով»** ասած՝ մի **«սիլա»**, որ նպատակ ունի բորբոք պահելու հայրենաբաղձությունն ու վերադարձի երգը բոլոր հայ մարդկանց հոգիներում:

Մնծուրու ծննդավայրը՝ Արմտանը, որը թուրքերը դարձրել են **Արմուբու** (Տանձուտ), Երզնկայի գավառակում էր գտնվում<sup>2</sup>, որը թուրքերը կոչում էին **Գուռուչայ** (Չորգետ), և որն ընկած էր Եփրատի և Ակնի միջև, որտեղով հոսում էր Եփրատի վտակներից Գուռուչայ գետակը<sup>3</sup>:

Հակոբ Մնծուրին գրական ասպարեզ մուտք գործեց 1906 թ. «Հարս ու կեսուր» գործով<sup>4</sup>, երբ հազիվ 20 տարեկան էր և օգտագործում էր Հակոբ Փափագյան ստորագրությունը: Պատմվածքը ներկայացնում էր նախորդ դարասկզբի գյուղական կյանքի ու աշխատանքի մի պատկեր և նշանակալից էր այնքանով, որ նախանշում էր մնծուրիական գրականության հիմնական թեման՝ գյուղաշխարհը, որը հետագա գործերում պետք է ընդլայնվեր ու ծավալվեր՝ ընդգրկելով ընդհանրապես Արևմտահայաստանն ու նրա մարդկանց:

Հակոբ Մնծուրու առաջին գիրքը՝ «Կապոյտ լոյսը», որի վերնագիրը կապված է նրա ծննդավայրի՝ Արմտանի թիկունքով անցնող Տուժիկի (Դերսիմի) լեռնաշղթայի ամենաբարձր լեռան անվան հետ, լոյս տեսավ 1958 թ., երբ հեղինակն արդեն... 72 տարեկան էր: Գիրքը տպագրվեց ոչ իր նախաձեռնությամբ, այլ Կ. Պոլսի «Էսսեան Սանուց Միութեան» ուսա-

1 **Մնծուրի Հ.**, Երկեր, Եր., 1986, էջ 366 (այս գրքից մեջբերումների էջերն այսուհետ կնշվեն տեքստում):

2 Մնծուրու գյուղն ու գավառը ևս ներառված էին ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի գծած Հայաստանի քարտեզում:

3 Գավառակն էլ մտնում էր Թուրքիայի արևելյան նահանգների և ռազմապետական մեկ այլ մեծ կառույցի մեջ, որն այլ անվանում ուներ և պաշտոնապես կոչվում էր Չորրորդ բանակ:

4 Տե՛ս «Մասիս», Կ. Պոլիս, 1906, N 1:

նողության ջանքերով: 1966 թ. լույս տեսած «Արմտան», 1974 թ. լույս տեսած «Կռունկ ուստի՞ կուգաս» և ետմահու՝ 1984 թ. լույս տեսած «Տեղեր ուր ես եղեր եմ» պատմվածքների, էսսեների, հուշերի ու վկայությունների ժողովածուները թեև մեծ ներդրումներ եղան գրողի ստեղծագործությունները գրքի տեսքով ընթերցողի սեղանին դնելու առումով, սակայն դրանք չընդգրկեցին նրա բոլոր գործերը՝ 1931 թ. Կ. Պոլսում տպագրված «Երկրորդ ամուսնություն» վիպակը, «Նազար» դրամատիկական երկը, ժամանակի մամուլի էջերում տեղ գտած մի շարք գրվածքներ, որոնց պետք է ավելացնել նաև մինչև 1914 թվականը գրած ձեռագրերը, որոնք մնացին գյուղում ու կորան, ղզլբաշների կյանքի մասին պատմող վեպը, որը Մնծուրին տվել էր Արտաշես Հարությունյանին՝ կարծիք ստանալու համար, բայց վերջինիս՝ 1915 թ. եղեռնի զոհ դառնալու պատճառով անհետացավ և այլն: Մեզ չհասան նաև այն գործերը, որոնք 1921, 1926 և 1929 թթ. հրո ճարակ դարձան Սկյուտարում (Մնծուրու գրած շուրջ 350 գործերից գրքերում ընդգրկվել է հազիվ մեկ երրորդը):

Ակամա ծագում է այն հարցը, թե քանի մարդ կշարունակեք գրել, եթե իմանար, որ... չի տպագրվելու: Բայց Մնծուրին չէր կարող չգրել. **«... Ինչո՞ւ կը գրէք: Մի գրէք: Ատ չենք կրնար ընել: ... Չենք կրնար միայն դիտել: Պիտի պարպուիք: Պիտի ըսենք: Ի՞նչ է գրականությունը ամէնէն վերջը. Մէկ բառով: ԸՍԵԼ Է: ԻՆՔՁԻՆՔԸ ԳՐԵԼ Է»<sup>5</sup>:**

Եվ նրանք **գալիս էին:** Գալիս էին կորսված երկրից, իր հարազատներից՝ **«իրեններից»**, որ եղեռնի զոհ էին դարձել: Նրանց բոլորին Մնծուրին կենդանագրել է իր պատմվածքներում, դարձրել գործող անձինք ու հերոսներ («Առաջնեկ», «Կավին դարը», «Մունջը», «Հարսնություն» և այլ գործերում): Տասնյակ այլ պատմվածքներում գրական տիպեր ու կերպարներ են դարձել Մնծուրու մամը՝ Տերտիրանց աղջիկը, մայրը՝ Տեմուրճանց հարսը, քեռին՝ Տեր-Պողոսը, որի կինը վաղ էր մահացել, և որը սիրում էր գյուղի երիտասարդների հետ կատակել, թե բոլորին ինքն է ամուսնացրել, բայց բոլորը չեն կարողանում իրեն ամուսնացնել, մյուս քեռին՝ Մինասը, Գրիգոր ապուպապը, որը երկաթագործ էր, որտեղից էլ գալիս էր գերդաստանի Տեմիրձյան մականունը, կինը՝ Ողտան, որդին՝ Խաչոն, և էլի շատերը:

Մնծուրին նույն սրտացավությամբ ու նույն սիրով գրում էր նաև իր հարևանների, բարեկամների, համագյուղացիների, ինչպես և հարևան հույն, ղզլբաշ, թուրք և քուրդ ժողովուրդների մասին: **«Կը գրեմ, կ'արտա-**

5 Մնծուրի Յ., Կռունկ ուստի՞ կուգաս, Իսթանպուլ, 1974, էջ 11:

**գրեմ, կը հեղեղեմ»**<sup>6</sup>,– վկայել է Մնծուրին: Եվ, իրոք, չգրել չէր կարող, այն էլ՝ գեղեցիկ ու պատկերավոր: Իր «Արմտանի այգիները» պատմվածքում Մնծուրին գրում է թզենու մասին. «Մեր Խառիժակի այգիեն խել մը վեր, ձորը, ես ալ հաստ մը ունեի: Ժայռի մը ետևն էր: Չէր տեսնվեր: Ես ալ պատահմամբ տեսա: ...Ամեն տարի, երբ հասուննար, կթառեի վրան» (Երկեր, էջ 427):

Մնծուրին պատահական չէ, որ գրում էր թզենու՝ ժայռի ծերպին, աչքից հեռու մնացած թզենու և նրա հասունացած պտուղների մասին, որոնց մեջ ամբարվում էին իր երկրի հող ու ջրի, ծառ ու ծաղկի քաղցրությունն ու արևի ջերմությունը: Ամբողջ պատկերը փոխաբերական խոր ենթատեքստ ունի. առանձնության մեջ, աշխարհի աչքից հեռու ապրում էր մի ժողովուրդ, որն ուներ հասուն միտք ու երազանքներ, որոնք արդյունք էին հայրենի հող ու ջրի, և Մնծուրին արևի ու հավքերի նման իր խոսքով «թառ» է լինում դրախտային այդ «ծառին»՝ շարունակել տալու համար արևմտահայ սերունդների պատմությունը՝ մեզ ամենքիս ընծայելով հայրենական մտքի ու լեզվի բազում քաղցրություններ: Աստվածաշնչյան այդ ծառը կյանքի գովերգման ու գեղեցկության, բնության հրաշալիքի խորհուրդներով է լի: Հայրենիքի քաղցրության թզենու մի-մի պտուղ են Մնծուրու պատմվածքները՝ հյուսված հուշերի թևերով ու սիրազեղումներով: Մնծուրու հայրենաբաղձ այդ հորդումները բազմաշերտ են ու անսպառ, որոնք ունեն մեկ ու միակ նպատակ՝ կերտել **Մեծ Բացակայի** անանց կերպարը: Գրողի պատկերած այդ իրականությունն իր էությամբ աննախադեպ է ու ինքնատիպ թե՛ բովանդակությամբ, թե՛ դրսևորումներով:

Մնծուրու կերտած գյուղացին, չնայած կյանքի դժվարին պայմաններին, ապրում է այդ նույն կյանքի բերկրանքներով, հրաշք աշխատանքի պարզևած երջանկությամբ ու օժտված է նաև մարդ արարածին բնորոշ երկակիություններով և անգամ «**տարօրինակություններով**»: Նա, օրինակ, կարող է հայհոյել իր մերձավորին, անգամ կնոջը ձիշտ այնպես, ինչպես հայհոյում է իր կամակոր ավանակի պապին, ցեղը և անգամ... հավատը: Նրա համար հավասար են իր անհոգ, անփույթ ու դյուրահավատ որդին («Հայրը») և չարքաշ աշխատանքն իր հետ բաժանող ջորին, եզը, ավանակը, որոնց նա կարող է գովաբանել ու շոյել, որոնց հետ կարող է տխրել և ուրախանալ, նաև երգիծել, բայց և խոսել, գրույցի բռնվել, շատախոսել և անգամ փիլիսոփայել:

---

6 «Բագին», Պեյրուք, 2021, N 1, էջ 65:

Մնծուրու գրականության առանցքում մարդն է՝ հայ գյուղացին, որը ապրում ու գործում է ընտանի կենդանիների հետ կողք կողքի՝ բնաշխարհի գեղեցկություններով լի միջավայրում: Հենց նրանք էլ դառնում են գլխավոր ու երկրորդական հերոսներ՝ գյուղացին ու կրոնավորը, հողի մշակն ու աշխատավորը, ընտանի ու վայրի չորքոտանիները, բարեբեր դաշտերն ու այգիները, խորխորատ ձորերն ու սայլի օգտագործման հնարավորություն չտվող կածանները, բույսերն ու թփուտները՝ բոլորը մեկ միասնության մեջ, բոլորը միմյանց շաղկապված, մեկը մյուսից անբաժան:

Մնծուրին իր պատմվածքները չի «գրում», կարելի է ասել, որ ոչ էլ նկարագրում է, այլ նկարագարում է, ավելի շուտ՝ գեղագարդում՝ տեսանելի ու անտեսանելի գեղեցկություններ հայտնաբերելով գյուղաշխարհի մարդկանց առօրյա կյանքում, բարքերում ու սովորույթներում, նվիրումներում ու երազանքներում, ընտանեկան հարաբերություններում, որոնք, անցյալի վերհուշներ լինելով հանդերձ, միևնույն ժամանակ այդ նույն անցյալի բաղձալի, շնչավորված վերհառնումներ են: Մնծուրու գրողական վարպետության հմայքն այն է, որ գյուղական կյանքում ու բարքերում հայտնաբերում է ինչպես ազգային, այնպես էլ համամարդկային տևական ու անանց արժեքներ, որոնց հիմքը հայրենի հողն է:

Ժողովրդի ստեղծած մեծ մշակույթը, ուրեմն և գրականությունը, իսկ այս դեպքում՝ Մնծուրու գրականությունը, լավագույնս է բնութագրել Հրանտ Մաթևոսյանը. «...կարելի է որևէ կերպ այնուամենայնիվ պատկերացնել – որպես թե, ահա, գրված, տպագրված, ձայնագրված՝ նիրհում են որևէ մատենադարանում, կառուցված՝ լուռ կանգնած են ամայության մեջ որևէ տեղ. գրվել ու ձայնագրվել են ժողովրդի բերանից, կանգնեցվել են ուխտավորի ու քարավանների համար, ժողովուրդը չկա, բայց մշակույթն ահա կա»<sup>7</sup>:

Ասվածին միայն հավելենք, որ Մնծուրու գրականությունը ոչ միայն «գրված, տպագրված, ձայնագրված» է, այլև նկարված ու քանդակված: Գրական այդ հսկան, որ արտաքնապես փոքրամարմին էր, կիսաչոր ու կիսակնճռոտ տեսք ուներ, գրականություն բերեց ոչ այնքան իր իննսուներկուամյա կյանքի փորձառությունը, որքան իր ծննդավայր Արմտանի՝ մ.թ.ա. 2-րդ հազարամյակից եկող հեթիթական պնակիտներից բխող լույսերն ու հայաստական գույները՝ միշտ նկարված և վրձնված

7 Մաթևոսյան Հ., Սպիտակ թղթի առջև, Եր., 2004, էջ 148-149:

20-րդ դարի հայ դաժան կյանքի արդեն դեղնած ու խունացած պատառոտուն էջերի վրա:

Մնծուրու պատմվածքների մեծագույն մասը գյուղական կյանքի պատկերումներ են, սակայն դրանք սովորական առումով **«առօրյա»** չեն, այլ արտակարգ կյանքի՝ այլևս չգոյ իրականության և ուրեմն անսովոր դարձած **«պատմություններ»**, որոնք լի են իմաստով ու ասելիքով, անկրկնելիությամբ և մանավանդ պատկերվող կյանքի կոլորիտայնությամբ, գունային ծաղկազարդումների, հատկապես կապույտի, կանաչի և դեղինի փողփողումներով, որոնցից կարելի է զգալ ավերիդ մեջ շողշողացող սելսերի, ակը շուռ տված հողի, թթենու տակ թափված հատապտուղների զգլխիչ բույրեր:

Մնծուրի գրողն ու արվեստագետը ոչ միայն զգում, այլև կրում էր այդ կյանքի բաբախը, բայց այդքանը քիչ էր. անհրաժեշտ էր այդ ամենը **տեսնել** և մանավանդ **մարմնավորել**՝ ամեն մի արվեստագետի այն կարևոր հատկանիշը, առանց որի նկարը երբեք երանգ չի դառնում, քանդակը՝ ձև, գիրքը՝ խոսք, երաժշտությունը՝ մեղեդի: Ուշագրավ մի մանրամասն. Մնծուրին իր պատմվածքներում հաճախ է օգտագործում **«ես կպատմեմ»**, **«ես ձեզի պատմում եմ»** և համանման այլ արտահայտություններ: Իրականում նա ոչինչ չի **«պատմում»** բառի բուն իմաստով, այլ պատկերում է, գույն ու երանգ տալիս, շնչավորում, այլ կերպ ասած՝ **«լեզու տալիս իր երկրին»**, գրական երկի հերոսներ դարձնում քարն ու լեռը, ջուրն ու ձամփան, խոսքի բռնվում հետները, մտնում գյուղացու հոգու ներս ու տուն (մի մեծ գյուղացի էլ ինքը), այնտեղ հանդիպում մի շատախոս սկետրոջ, դեմքը ծածկած հարսի, չարաձձի, բոկոտն ու թանապուրապատ մանուկների, հատակին ընկած փշատենու ծաղկի, դուրս գալիս դաշտ՝ տեսնելու արտ վարող քահանային, ջորիների զանգուլակներով միջոցը լցրած որան կրող պատանիներին, ծառի սովերում քնած հանդապահին, ցորենի արտ մտած հորթին... Եվ այդ ամենի մասին այնպես է գրում, ասես քեզ հետ նստած զրուցում է պարզ ու հստակ, ասել է թե՛ վճիտ ու ընկալելի: Սա իհարկե չի նշանակում, թե նա թղթին է հանձնել այդ պահին իր մտքին եկածը: Մինչև ավարտուն տեսքին հասնելը Մնծուրու խոսքն անցել է ստեղծագործական տքնանքի բովով, ինչի մասին նա վկայում է նաև իր պատմվածքներից մեկում՝ «Բանաստեղծը և դրամը», որում գրում է. **«...օրեր, շաբաթներ կուտամ քերթված մը, պատմվածք մը արտագրելու, զայն իր ավարտուն ձևին հասցնելու համար (ընդգծումը մերն է – Ա. Ա.)...»** (Երկեր, էջ 430):

Եվ եթե Մնծուրին չի «պատմում», ուրեմն այլ չափանիշներով պետք է մոտենալ նրա գրականությանը: Այս բանը լավ է նկատել սփյուռքահայ գրականության մեր լավագույն գիտականներից մեկը՝ Գեղամ Սևանը, որը Մնծուրուն նվիրված իր մենագրության էջերը շարադրել է հենց այդ ելակետից՝ մնծուրիական գրականության մեջ տեսնելով անցյալի խորքերից հառնող-ապրող երկիրն ու նրա մարդկանց<sup>8</sup>: Այդ գրականությունը գնահատելու և արժևորելու ուրույն ու ինքնատիպ չափանիշներ է տվել սփյուռքահայ գրականագետ Արսեն Ճանյանը. «Երևի շատեր վիրավորական համարեն, եթե ասեմ, որ շատ էլ կարդաք, քիչ էլ կարդաք, մեկ է, չեք հասկանա Մնծուրուն: Վարուցան արե՞լ եք, արտ քաղե՞լ եք. խոտ հնձե՞լ եք, գիտե՞ք, թե նոր քաղված արտը, խոզանը, վայրի անանուխը, մրտենիս ինչպե՞ս կբուրեն: Էլ ինչպե՞ս և ինչքա՞ն կարող եք, ուրեմն, հասկանալ Մնծուրուն»<sup>9</sup>:

Իրոք, Մնծուրու գրականությունն օժտված է ուշագրավ յուրատեսակությամբ: Նա իր պատմվածքներում չի պատկերում ինտերիերային, կամերային կյանք: Գործողություններն ու իրադարձությունները մեծ մասամբ կատարվում են դրսում, լայն մի տարածքում, անգամ ընտանեկան պատկերներ կերտելիս նա շտապում է դաշտ ու այգի, հանդ ու լեռ տանելու իր հերոսներին՝ այնտեղ ծավալելու դեպքերի ու գործողությունների զարգացումները: Գրողն ամեն անգամ իր հերոսների հետ դուրս է գալիս արտ ու խոզան, իջնում նեղկածան ձորակները, բարձրանում լանջերն ի վեր՝ այնտեղ տեսնելով բաբախող կյանքը, այնտեղից ոգևորվում և այնտեղից քաղում իր պատկերները: Պատկերավորման ու կերպավորման այդ ազատությունն ու անկաշկանդվածությունը ստեղծում են այն բնական ու գեղագիտական դաշտը, որը մեծ կշիռ ունի մնծուրիական գրականության մեջ:

Ինչպես ասվեց, Մնծուրին «սովորական» տառերով ու բառերով չէր գրում: Նա իր պատմվածքները կտավի էր վերածում՝ զարդարելով դրանք ծառ ու ծաղկի, դեպի բարձունքները ձգվող սարերի, ցորենագիրկ, ոսկեգույն դաշտերի, բերքառատ այգիների, տարատեսակ չորքոտանիների բնութագրական կենդանագրումներով: Եվ այս ամենը պայմանավորված է նրանով, որ Մնծուրին ինքը այդ կյանքի մի մասնիկն էր, իր պատկերած գյուղաշխարհի իրական բնակիչը, իր ներկայացրած գյուղացիներից մեկը, որ նույնքան աշխատավոր էր, նույնքան հողի մշակ, որքան որ նկարիչ ու քանաստեղծ էր:

8 Տե՛ս Սևան Գ., Հակոբ Մնծուրի, Եր., 1981:

9 «Գրական թերթ», Եր., 1991, 1 մարտի, N 9:

Մնծուրին առանձին պաշտամունք ուներ առ ամեն մի գեղեցիկը: Ի դեպ, դրա դրսևորումներից մեկն էլ նրա անսման գեղագիր ձեռագիրն էր, որը Կ. Պոլսի ուսանողական տարիներին քիչ էր մնացել, որ նրան տաներ որպես գրագիր թուրքական իշխանության բարձր աստյաններից մեկում աշխատելու: Թուրք իշխանավորը, որ տեսել էր նրա ձեռագիրը, ասել էր. «Մեղք, որ միալիման չես»<sup>10</sup>:

Մնծուրին էսսեստիպ մի գործ ունի, որը բնութագրական «Բանաստեղծը» վերնագիրն է կրում, որում կերպավորված է արվեստագետ ու գեղագետ ստեղծագործողի անձը, որը հենց ինքն է: Իր գրականությունն ու իրեն գնահատելով՝ Մնծուրին այդ գործում գրում է, որ բանաստեղծը այնպիսի բաների մասին էր խոսում և «այնպիսի եղանակով մը, որ ընթերցողները իրենք զիրենք այդ այգիներուն, ձորերուն, լեռներուն մեջ կկարծեին, գիտեին, թե հիմա ձեռքով պիտի բռնեին, շոշափեին պատմածները»: Այդ ընթերցողները չէին ճանաչում բանաստեղծին և չգիտեին, որ այդ ամենը գրողը «օրավարձով կաշխատեր, ու կբնակեր տնակի մը մեջ և թե կգրեր այս բոլորը մատներով, որ կարծրացած էին բանվորի աշխատանքեն» (Երկեր, էջ 355):

Նա այն նույն վարուժանական սերմնացան-բանաստեղծ արևմտահայ գյուղացին չէ՞, որ առավոտյան աղոթքից հետո ճամփա էր ընկնում դեպի դաշտ՝ իր բահի տակ արթնացնելու «արարչությունը հողին», իր գրչով պանծացնելու «**բերրիությունը ցողուններուն**» ու մտքին: Հենց դրա համար էլ Մնծուրին ամեն բան **տեսնել** է տալիս, անուն առ անուն **արձանագրում**՝ գետ, հանդ, լեռ, աղբյուր, բնակավայր, որոնք այլևս չկան, ինչպես որ էին նախկինում, և այդ «**չկան**» պարտադրում էր նրան ամենայն մանրամասնությամբ վերակենդանացնել, ասքի վերածել եղածը՝ չնոռացվելու համար: Բայց զարմանալի մի բան. Մնծուրին նրանց մահվան մասին չէ, որ գրում է, նրանց «**չլինելու**» մասին չէ, որ «**պատմում**» է, այլ նրանց կյանքի, շենշող ու արարիչ այն կյանքի, որ ընդհատում չունի, չի կարող ավարտվել, վարակիչ է, ներառնող այն աստիճան, որ ընթերցողին իր հեքի մեջ է պահում, մասնակից ու ականատես դարձնում, ավելին՝ դարձնում հենց **արմտանցի, զինարացի, չմշկածագի, տիվրիկցի...**

Միայն մարդկանց ու տեղանքը չէ, սակայն, որ անձնավորում ու կենդանագրում է Մնծուրին: Նա խոսեցնում է ամեն բան՝ մի ամբողջ երկիր, և դրա համար էլ գրում է. «*Ես իմ երկիրս խոսեցուցի*»՝ դրա մեջ

---

10 Մնծուրի 3., Տեղեր ուր ես եղեր եմ, Իսթանպուլ, 1984, էջ 78:



տեսնելով իր ժողովրդի ու նրա հող-հայրենիի հարատևության խորհուրդը:

Մնծուրիական այդ գրականության բնութագրական գծերից մեկը կարելի է անփոփել հետևյալ բանաձևով՝ «**գյուղս, ես, հողս, մենք**», որ մեկ ամբողջություն է, ընդհանրացնող մեկ միավոր:

Իր խոսքերով ասած՝ Մնծուրին «**քայլ-քայլ**» գիտի այն վայրերը, որոնց մասին գրում է, առանձին-առանձին ճանաչում է այն մարդկանց (նշենք, որ Մեծ ու Փոքր Արմտաններում ապրող մարդիկ մասամբ միմյանց բարեկամներ էին, խնամիներ, նույն գերդաստանի ճյուղավորումներ), որոնց կերպավորում է, և խոսքով, գործով ու էությանը արտացոլում է այն միջավայրը, որն իրենով պայմանավորում էր հայ մարդու ազնվական վարքն ու մտածելակերպը: Այս հատկանիշը, Մնծուրուց զատ, բնորոշ էր նաև «**կարոտի գրականության**» մյուս բոլոր գրողներին՝ Համաստեղ, Արամ Հայկազ, Հակոբ Ասատուրյան, քանի որ թանձր ու տեսանելի այդ **տեղագրությունը** և **մարդագրությունը** հենց այն **Հայրենիք** ասվածն էր, որ անկասելի կարոտի ակունքն ու իմաստն էր: Եվ եթե այդ կարոտի բաղադրիչներից մեկը պատմական ճշմարտության իմացությունն էր, մեկը՝ ազգային գիտակցությունը, ապա մեկն էլ մարդկային հուշն էր, որ դադար ու հանգիստ չէր տալիս, և որը թերևս «**ապրիլյան եղեռն**» բառակապակցությամբ էր իմաստավորվում, որն իր մնծուրիական ձևակերպումը ստացավ «Կռունկ ուստի՞ կուգաս» գրքի վերնագրով, թեմայի միախառնված հուշ ու կարոտով, որոնք երամներով գալիս էին ու լցնում գրողին, կուտակվում նրա հոգում, և «**դատարկվելու**» միակ ձևը գրելն էր մնում, ծնվող պատմվածքները, միմյանց հաջորդող բնապատկերները («Ձյունանկար», «Գետանկար» և այլն), հեքիաթները, էսսեները...

Այդ հուշ-կարոտները միայն հարազատ մարդկանցից, կորցրած տնից ու հողից չէին ակունքվում: Աշխարհի քառուղիներում հայտնված հայ մարդը, որն իր հիմնական զանգվածով գյուղաբնակ էր, կորցրել էր նաև, չզարմանանք, «**իր տան անդամ**» չորքոտանիներին, որոնց հետ դաշտ էր գնում ու «**բեռ կրում**», հավասարը հավասարին հող հերկում, ցախ կրում, տուն պահում: Եվ քանի որ ամեն բանում իրենք հավասար էին, գյուղացին չէր կարող նրանց հետ **չխոսել**, այդ կենդանիներն էլ չէին կարող իրենց ձակատագրի «**ընկեր-գյուղացու**» խոսքը չհասկանալ ու իրենք էլ «**չխոսել**», ի տես այդ մարդու մշտական ներկայության և նրա ծանր աշխատանքի՝ իրենք էլ «**չմարդանալ**»: Մնծուրիական գրականության կարևորագույն առանձնահատկություններից մեկը կենդանի-

ների և բուսական աշխարհի անձնավորումն է: Ամեն, ամեն բան նա տեսնում ու ընկալում է շարժման մեջ, կենդանի գործողություններում. կենդանիները ամենաուղիղ ձևով մտածել ու խոսել գիտեն, ինչպես մարդ արարածը՝ խորհել ու խռովել, նազ են անում, հրձվում ու տխրում, հողը, արտը, դաշտը, այգին բեղմնավորվում ու բեղմնավորում են, երկնում ու ծնում, հարսնավորվում, գետը, ձորը սմբում-մեռնում և կամ հարություն են առնում, լեռը՝ սառչում ու մրսում, ծառը՝ դողում, շունչ առնում, ծաղիկը՝ թաքնվում, ժպտում, մասբենին՝ «փեշերը ցած իջեցնում, որ մարդ չտեսնի, ամոթ է», և այսպես շարունակ ու անընդհատ: Այդ ամենը գալիս էր այն երկրից, որի ծնունդն էր Մնծուրին, և որտեղ մարդիկ այդպես էին ընկալում աշխարհը, ու նաև այն բանից, որ քնարական խոր խառնվածք ուներ ինքը՝ Մնծուրին, մարդկանց սիրո ու երկրի պաշտամունքի այն զգացողությունից, որով լի էին նրա միտքն ու հոգին: Եվ Մնծուրին պիտի գրեր՝ «...կկուն, որ ամբողջ օրը կո՛ւ-կո՛ւ, կո՛ւ-կո՛ւ» է կանչում, երաժիշտ է, նապաստակը բաղաձայն է, երաժշտություն չըմբռնող, «*փորը անոթի*» աղվեսը՝ մտածող... «...կխորհի աշխարհի բաներուն ունայնությունը, աշխարհի կարգերուն, սխալներուն վրա, ու մտքովը կորոնե ավելի արդար, արժանավայել կարգ ու սարք մը գտնելու» (Երկեր, էջ 354-355):

Կենդանական աշխարհի համակողմանի ճանաչումը Մնծուրու գրականության գրավիչ հատկանիշներից մեկն է, որը ոչ միայն իմացության, այլև սեփական փորձառության հետևանք էր. «Էջն որ չհեծնես, մուտուկովդ չմուտուկես, ինք իր քեֆին ձգես, էշ ըսեր են անոր, կքալե՞: Երկու ոտք կերթա, կկայնի: Կամ՝ ձամբան խոտ մը, բույս մը տեսնե՛ անոր կմոտենա: Աչքը երկու կողմն է, ուրիշ բույս մը... չծամե, չկլլե՛ ոտք առաջ կնետե՞» (Երկեր, էջ 359):

Այդ նույն կենդանու վարքի մասին, որին մենք տեսնում ենք Մնծուրու տասնյակ պատմվածքներում, մեկ այլ տեղ Մնծուրին գրում է, որ որտեղ թողնես նրան, այնտեղ էլ մնում է, ժամերով կանգնում մնում:

Այսպես. «Էշերը շատ կ'ախորժին փուշէն ու կորթինքէն... Փուշը շատ կը սիրեն, մանավանդ բարձր ցողունով կարմիր-կապոյտ-մանիշակագոյն կառերը: Մենք մատներնիս անգամ կը վախնանք դպցնելէ, կը խայթուին, անոնք խենթի պէս անյագօրէն կ'ուտեն, ի՛նչ քնքշութիւնով, ի՛նչ ձեւով ու արուեստով, կը հիանաք»<sup>11</sup>:

11 **Մնծուրի 3.**, Մենք, Անթիլիաս, 2018, էջ 367 (այս գրքից մեջբերումների էջերն այսուհետ կնշվեն տեքստում):

«Եզը տեղ մը կանգ չ'առնէր: Եթէ թողուս թէ կ'ուտէ, թէ կերթայ: Շուրջը ինչքան խոտաւէտ ըլլայ չ'արածէր. անդադար կ'առաջանայ, միշտ դէպի լեռ. դէպի բարձունքները: Կովն ալ ուտելով կը քայլէ, ջորին խառնածին է, դեգ է, չար է, անվստահելի է, իր տիրոջը անգամ կիցեր կ'արձակէ ու կը կորսուի, չես կրնար որոշել ո՞ր ու ո՞ր դի:

Ձին շատակեր չէ, քիչ կ'արածի, ձիգ, երկա՛յն, արծաթեայ հնչիւններով կը խրխնջայ հեռաւոր հորիզոններուն, սպասելով որ պատասխանուին» (Մենք, էջ 368):

Մնծուրին ավանակին ներկայացնում է կենդանուն բնորոշ **բնագ-դական** մի շարք հատկանիշներով, օրինակ՝ մի քանի քայլ արագ քայլում է և սկսում խոտ ուտել, մինչև տերը կնոտենա: Բայց այդ կենդանուն նա օժտում է շատ ավելի մարդկային հատկանիշներով. նա կարող է տիրոջ բոլոր ասածները հասկանալ, անգամ ընդհանրացումներ անել իր տիրոջ վերաբերյալ. «...ան տունն ալ ամեն օր կհայիոյե կնոջը, հարսին, տղուն» (Երկեր, էջ 349-350):

Ավանակը կարող է նաև փիլիսոփայել: Հորդառատ անձրևի տակ ընկած ավանակը «մեղադրում» է իր տիրոջը, որ շուտ ճամփա չընկան, նույնիսկ երգիծում՝ «աշխարհի ծա՛յրը պիտի հասնեին», եթե վաղ դուրս գային:

Եվ երբ չկա գյուղացուն օգնող կենդանին, գյուղական ապրուստը և ամբողջ ծանր աշխատանքը մնում են գյուղացու ուտերին: Կորել է Մադաքյանի էջը, նա գրկվել է օգնող ձեռքից, հասել թշվառության: Մնծուրին նրա մասին գրում է. «Մօրուքը ճամբու փոշիներէն փոշոտած, տրեխները ոտքը չորցած կը կենար գիւղամէջը, Ժամուն պատին տակը...» (Մենք, էջ 368):

«Տյուկե մամուն եզը» պատմվածքում լուր է ստացվում, որ տան միակ եզը լեռան գլխից գլորվել ու սատկել է: Տյուկե մամն այնպիսի ողբ է անում, որ ասես մարդ է մահացել. «...աս ինչ է ըրիր մեզի, ինչ սեւ ձին բերիր մեր գլխուն, արեւդ առիր ու գացիր...» (Մենք, էջ 342): Այդ **«մարդացումը»** ընդգծում է այն մեծ ու անփոխարինելի դերը, որ ունի եզն ընտանիքի ապրուստն ապահովելու գործում. «...հիմա ի՞նչ պիտի ընենք մենք, տանը .... էրիկ մարդ չունինք. մենք մնացինք դրանը ետեւ, հարսս ու ես, երեք մանուկներով տուն մը մարդ քու հացդ կ'ուտէինք...» (նույն տեղում):

Նույն նախադասության վերջնամասում Մնծուրին հասնում է կենդանու անձնավորման բարձրակետին. «...**տուն մը մարդ քու հացդ կ'ուտէինք** (ընդգծումը մերն է - Ա. Ա.)...»: Մի բան, որ ասվում է տան

աշխատող տղամարդու համար, և որը հիմնավորվում է եզանը տրված «**փաշա**» և «**պապօ**» վերագրումներով:

Ահա և այծը, որը կանգնած է սանդուղքի վերին աստիճանին և բալկի այծերին «**ձառ մը կարդալ, քարոզ մը տալ**» է սկսում: Այծերի մեջ դեռ պահպանվել են իրենց հեռավոր վայրի նախնիների վարքի որոշ հատկանիշներ<sup>12</sup>, և Մնծուրին գրում է. «**Ամառ, ձմեռ կարածի դուրսը՝ սարերը, ձորերը, գետափները .... ցուրտեն չի մսիր, .... քարայրը չի բանտվիր, դուրս կփախի, .... ծառ մը, թուփ մը տեսնէ, ետևի սրունքներուն վրա ուղղաձիգ կկայսի, կերկննա մինչև ծառին ճյուղերը.... Հանկարծ խոտի մը համար, մինչև ժայռի մը գլուխը կբարձրանա, կկենա, մարգարեական սորուքը միջոցին մեջ՝ քարոզչի մը պես, իր նայվածքը կպտտեցնէ հեռավոր տարածություններուն** (ընդգծումը մերն է – Ա. Ա.)» (Երկեր, էջ 410):

Մնծուրին «**վկայում**» է, որ անգամ հավերը «**անխելք չեն**»: Նրանք բակում ուշադրություն չեն դարձնում ընտանիքի մյուս անդամներին և սպասում են Ոսկեհան քեռու կնոջը, քանի որ կուտ տվողը նա է, որին **ձանաչում** են ոչ միայն աքաղաղներն ու հավերը, այլև «հալկիթէն նոր ելած ձագերը» (Մենք, էջ 283): Մնծուրու գրականությունն առանձնանում է ևս մեկ հատկանիշով, այն է՝ նա ավելի շատ պատկերում է իրենց արտաքինով ու համբավով քիչ գրավիչ, քան, ասենք, բարի անուն ունեցող և գեղեցիկ կենդանիների ու թռչունների: Պատճառը մեկնելի է. առաջին պլան են մղվում այն կենդանիները, որոնք անմիջականորեն կապված էին գյուղական կյանքի և աշխատանքի հետ, գյուղացու առօրյայի մշտական ուղեկիցներն էին, նրա «**բոլորտիթէն**» չհեռացողները (գավառը թեև լի էր եղնիկներով, կաքավներով, բայց Մնծուրին նրանց մասին չի գրում, մինչդեռ այծերի, ջորիների մասին բավականին շատ է գրում): «Ագռավները» պատմվածքը դրա վառ օրինակներից է, որում Մնծուրին ոչ միայն ներկայացնում է ագռավների թռչնային կյանքին բնորոշ մանրամասներ, այլև որոշ դեպքերում մարդկային վարքի ու գործունեության բնորոշ գծերով է օժտում նրանց: Ո՛չ արտաքին տեսքով՝ «**սես**», ո՛չ պահվածքով՝ «**գող**», ո՛չ ձայնով՝ «**ղա՛....**», ոչնչով գրավչություն չունեցող այդ կենդանիների մասին, սակայն, Մնծուրին գրում է, թե «...մեզի կը նայէին նայուածքով մը, որ մարդկայինին կը նմանէր» (Մենք, էջ 205):

Մնծուրին այդպիսի բազում «**մարդկային**» հատկանիշներ է տեսնում ագռավների մանավանդ վարքում: Նրանք, օրինակ, կարող են

---

<sup>12</sup> Մարդկությունն առ այսօր հազարավոր վայրի կենդանիներից հազիվ երկու տասնյակին է կարողացել ընտելացնել:

«**հետաքրքրությունով հետևել**» մարդկանց կատարած աշխատանքներին, «**ուրախանալ**», «**բերաններուն ջուրերը վազեցնել**», «**կեղծել**», «**անմեղ ձևացնել**», «**գիտենալ**», որ շունը զայրանում է, «**լրտեսել**» մարդկանց շարժք, «**գողի մը պէս բոլոր գգուշությունները կիրառել....**»: Բայց, ինչպես գրում է Մնձուրին, ամենից զարմանալին նրանց «**ժողովներն**» էին, որոնք գրողը նմանեցնում է մարդկանց «պատգամաւորական նիստերուն»։ «**Անմիջապէս որ կը մթնէր՝ հեռաւորութենէ մը յանկարծ ագռաւ մը կուգար, պատգամաբերի մը պէս, ու ընկուզենիին գագաթը կը տեղաւորուէր: Երկու ագռաւներ կը հետևէին իրեն, ու իրմէ վար, իր աջն ու ձախը կը գրաւէին: Ու յետոյ երկերկու, երեքական խումբերով հետզհետէ կը հասնէին գիշերին ամէն դիերէն եկողները: .... Ուշացողները երկրորդ ընկուզենիին վրայ կ'իջնային: Ու կը սկսէր իրենց միավանկերով փոխասացութիւնը: Մէկը կ'ըսէր. ուրիշ մը կը պատասխանէր: Երբեմն երկու, երեք կ'ըսէին, ուրիշ երկու երեքները կը պատասխանէին: Երբեմն յանկարծ, բոլոր ձիւղերէն բոլոր ագռաւները կը մասնակցէին: Ժխորը, կանչերը կը սաստկանային, ի գուր գագաթի ագռաւը, իր երկու օգնականներով կը միջամտէր, հանդարտեցնելու համար կողմերը: Այն ատեն ուրիշ տեսարան մը կը յաջորդէր: Ագռաւներէն մէկ երրորդը, երբեմն աւելին կը թռչէին ընկուզենիէն, հանդիպակաց բարտիներու գագաթները կը խմբուէին, ու միասին ու միահամուռ կը պատասխանէին ընկուզենիներու իրենց ընկերներուն (ընդգծումը մերն է – Ա. Ա.)» (Մենք, էջ 208):**

Այսպես ժխորաշատ ու կանչերով չէ՞ն անցնում մարդկանց պատգամավորական ժողովները՝ միմյանց հակոտնյա ու դիմադիր, միշտ «ընկուզենիէն հանդիպակաց բարտիներու (հասկանալ այլ կուսակցությունների – Ա. Ա.) գագաթները» և հակառակը՝ բարտիներից ընկուզենիների գագաթները թառող անդամներով:

Պակաս մարդկայնացված չեն նաև միջատները, ավելին՝ նրանք կարող են նաև համերգներ տալ: Ծղրիդները, օրինակ, «իրենց սեպտեմբերի վերջին համերգները կկանչեն»: Ծղրիդների (Մնձուրին նրանց ժիժիներ է անվանում) «ամենակալության» ամիսներին նրանց անհամարությունն ընդգծելու համար Մնձուրին գրում է, որ «ծառերը ծառ չէին, որ ժիժի էին», և նրանց միանվագ երգը վերջ չունէր:

Մնձուրին կենդանագրում ու անձնավորում է ամեն, ամեն բան, անգամ անշունչ առարկաները՝ ծառ, ծաղիկ, արտ, լեռ, քար, թուփ... Որքան հետաքրքիր, նույնքան էլ ուշագրավ են զանազան խոտաբույսերի,

տարբեր ծառերի ու գետերի անձնավորումները: «Գետանկար» գործում, որը ծայրեիծայր պատկերների մի համախումբ է, Մնձուրին ներկայացնում է գետի եզերքներին և հենց գետի մեջ բուսած ու բերքով առատ թթենին, ճյուղերը գետի վրա տարածած փշատենին, որոնց կողքերին բուսել են նաև «յունապենիներ, մասրենիներ, ճեղիներ... մոշենիներ», այնուհետև գրում. «Երկու փշատիներ ու մասրենի մը եւս կան, որոնց վրայ չես կրնար չզարմանալ: Շիտակ ելլելու տեղ գետին մակերեսին պատկած երկնցեր են: Մինչև գետին կէսը հասեր են, ուր որ է դիմացի ափը աղբիւրին կը մօտենան, բայց գետը կը թողո՞ւ: Փշատիները ինչ որ է, հաստըկեկ են, **մասրենիին հոգի՞ն ինչ է, ջերմ բոնողի պէս անդադար կը դողայ ջուրերուն վրայ: Ան ի՞նչ կ'ըսէ ու անցնիլ կ'ուզէ դիմացի ափը** (ընդգծումը մերն է – Ա. Ա.)» (Երկեր, էջ 256):

Այսպես «մարդ դարձած» գետը **չի թողնում**, որ փշատենին ու մասրենին հասնեն մյուս ափը: Պարզվում է, որ մասրենին հոգի ունի և ջերմություն ունեցող մարդու նման կարող է անդադար դողալ, ինչ-որ բան է ուզում ասել, իսկ քիչ անց վախն անցնում է, անգամ համոզված է, որ գետը պիտի անցնի:

Հաջորդ դրվագում Մնձուրին պատկերում է բարակ «յունապենիներին» կապված կախօրբանը, որի մեջ ցորենի ծղոտի պես բարակ, նիհար ու անարյուն կինը, որը ո՛չ մեջք ունի, ո՛չ փոր, բայց արդեն չորս երեխաների մայր է, պառկեցրել է երկու օրական երեխային և օրորում է. «...օրբանը կ'օրբէ որ գետին վրայ կ'երթայ ու կուգայ: Երկու յունապենիները ամէն օրբելուն, իրենք ալ **թունդ կ'ելլեն**, կը ծռին ու կը շտկուին ու **իրենց ոստերը, տերեւները իրարու զարնելով ծափիկ կը խաղան մանկիկին վրայ** (ընդգծումները մերն են – Ա. Ա.)» (Մենք, էջ 257):

Գեղարվեստական գրավիչ պատկերներ այս գործում էլի կան: Մտաբերենք աղմկոտ, հորդ ու «երգող» գետի հակադիր ափերից միմյանց հետ գոռում-գոչյուններով խոսող երկու կանանց, իսկ հաջորդ հատվածն ուղղակի անգերագանցելի է, գրական անանց գյուտ. «Գետեզերքի մոշիները պատժուած տղոց պէս կայներ են: Իրենց մեծերուն պէս **մինչև կրունկները փեշով են: Գետը շուտ-շուտ կը վերցնէ իրենց փէշերը, կը խաղայ անոնց հետ, իրենք ալ ատ չեն ուզեր, կ'ամչնան, ամօթ է, մինչև ծունկերնին կը ծռին գետին մէջ, աղջիկներու պէս վար կը քաշեն որ մարդ չտեսնի** (ընդգծումը մերն է – Ա. Ա.)» (Մենք, էջ 258):

Մոշենիներն ամաչում են, աղջիկների պես իրենց փեշերն իջեցնում, որ գետը վեր չբարձրացնի ու խաղա իրենց ոտքերի հետ... Ավելի լավ հավանաբար հնարավոր չէ ասել:

«Յակոբ Տէմիրճեան» ստորագրությամբ «Գիշերին մէջ» պատմվածքում<sup>13</sup> Մնծուրին նկարագրում է գյուղական իրիկնապահը, դաշտային աշխատանքներից վերադարձող մարդկանց, մի միջավայր, որը լի է հովվերգական պատկերներով: Պատմվածքը նշանակալից է նրանով, որ Մնծուրին իրերի ու առարկաների անձնավորման առաջին նշաններն է տալիս, որոնք ծավալվեցին նրա հետագա շատ գործերում. «Պարտեզին չոր պատերուն կարգովը բարտիներ կանգնած են, երկայն ու սաղարթազարդ: **Հարսնէր** են անոնք. կանոնաւոր, ուղիղ գիծերու վրայ **բարեբռնելով** շարուած գեղահասակ հարսներ են: Երբեմն անոնք **գլուխ գլխի կը մօտեցնեն, կը պլլուին, կը համբուրուին, իրարու բաներ մը կը գաղտնասեն**, յետոյ կ'ուղղուին, վերստին բարեւի կը կայնին ու անխօս կ'սպասեն: .... Պարտեզին բարտիները, վլվլացող աչքերով հարսներու պէս, **գլուխին ետեւին կը դարձնեն ու գիւղը կը դիտեն** (ընդգծումները մերն են – Ա. Ա.)»:

Մնծուրու գրականության ուշագրավ էջերից են նաև բուսականության ու ծաղիկների անձնավորումները: Կակուռիկները (խոտաբույս, որի երկար ցողունները պահպանվում են նաև ձմռանը) կարող են նայել ու լսել, ինչպես մարդը, շրջվել գիտեն: Ծեր մաման, նրանց չորացած վիճակը տեսնելով, կարող է ասել. «...յարերնիդ մեռեր են...»

– Կակուռիկները լսեցին, ամենքը դարձան, իրեն նայեցան» (Երկեր, էջ 416):

«Յարերնիդ», այն է՝ տաք օրերին, կանաչում են ու ծաղկում, մինչդեռ հիմա իրենց չորությամբ սգակիր են դարձել:

Մնծուրու տեսողական, զգայական ընկալման խորությունը զարմացնող է, իսկ պատկերային մտածողությունը՝ պարզապես առինքնող: Ահա այդպիսի մի պատկեր. «Պարտեզի մը մէջ նշենի մը ծաղկեր էր, գետինն մինչև գագաթը՝ մեկ կարմիր – մեկ ձերմակ, մեկ կարմիր – մեկ ձերմակ, մեկ կարմիր – մեկ ձերմակ ծաղիկներով կփոփռար արևեն» (Երկեր, էջ 416):

Ուշադրություն դարձնենք մի «մանրուքի». Մնծուրին իր այս պատկերում կիրառում է զուտ իրեն հատուկ կետադրություն՝ «**մեկ կարմիր – մեկ ձերմակ**», այն է՝ ստորակետի փոխարեն գծիկ է դնում, որով նպատակ ունի ցույց տալու գույների ոչ թե մեկընդմեջությունը, իրարահաջորդությունը, այլ միաձուլվածությունը, փոխթափանցությունը, իր խոսքով՝ «փոփռանքը»:

13 Տե՛ս «Մեհեան», Կ. Պոլիս, 1914, 1-ը յունիսի, N 6:

«Խաղցեք գառնուկներս, ուլիկներս խաղցեք...» պատմվածքում Մնծուրին գրում է Խորուկալ գյուղեզերքում վաղ գարնանը ձյուների միջից նոր-նոր բուսած բամբուսիկի մասին. «Բամբուսիկ մը բուսեր էր, մեկ հատ մը, մինակ: Մաման գիտեր, որ ան պահակ էր, ուրիշներն ալ պիտի ըլլային մոտերը խումբով շատ: Անոնք կպահվեին, չէին երևար, կքաշվեին» (Երկեր, էջ 416): Նորաբաց ծաղիկներին Մնծուրին «**պահակ էր**», «**կպահվեին**», «**կքաշվեին**» հատկանիշներ է վերագրում, որոնք մարդկային որակներ են, և որոնք, շնչավորության, կենդանության տպավորություն ստեղծելուց զատ, նաև բնութագրում են ծաղիկների... բնավորությունը՝ ամոթխածությունը:

«**Բամբուսիկները հարսնություն ունեին**»՝ ընդամենը երեք բառից կազմված մի նախադասություն պատմվածքում, որը շատ սեղմ, մեկ բառով արտահայտվող մի միտք է՝ «ծաղկել» էին, այն է՝ իրենց գեղեցկության, կատարելության՝ հարսնության մեջ էին, և որը Մնծուրուն տանում է նուրբ ու հոգեխռով մեկ այլ նկարագրության ու համեմատության. «...բամբուսիկներուն պես ալ աղվորիկ ծաղիկ կա՞ աշխարհիս վրա: Պտտիկ: Քանի՞ մը ըսեմ: Հոգեհանգիստներուն ժամը մոմեր կբաժնեն ժողովրդին, անոնց չափ կա ու չկա: **Բայց ամչկոտ, ամչկոտ: Կողոզան՝ շատ նայելու ըլլաս վրանին** (ընդգծումը մերն է – Ա. Ա.): Վարդերուն անունը ելած է: Անոնց անանկ մետաքսավետ, լուսեղեն կարմիրը ունի՞ն վարդերը. անոնց բաժակներուն լուսեղեն դեղինը հոտոցիկները ունի՞ն: Եվ բույրերը: Ոչ մեկ բույրի հետ կփոխես» (Երկեր, էջ 416):

Կենդանական աշխարհին վերաբերող գործերում, որքան էլ որ ներկայացվում են տարբեր վարք ու պահվածք, տարբեր դեր ու նշանակություն ունեցող տարբեր կենդանիներ, նրանց ու մարդկանց միջև եղած երբեմն ծիծաղելի, երբեմն զավեշտական, իսկ երբեմն էլ մերժելի փոխհարաբերություններ, միշտ անփոփոխ է մնում անանց այն գործվը, որ տածում էր գյուղացի մարդն առ իր կյանքում զգալի տեղ զբաղեցնող այդ արարածները, առանց որոնց անհնար էր ոչ միայն կատարել ամենածանր աշխատանքները, այլև... ճանապարհ գնալ, մենախոսել ու երկխոսել, որոնց նորածագերով ուրախանում էր այնպես, ինչպես զավակ կամ թոռ ունենալիս. «Հարսը, հորթը գրկած, հայտնվեցավ դարձյալ ու կայնեցուց սրունքներուն վրա: Դեռ թաց էր, կողոզար, կմսեր:

– Որձ ալ է եղեր: Աստված պահե՛ եզ մը կըլլա...» (Երկեր, էջ 36): Սա նշանակում էր, որ կյանքը շարունակվում է: Ցավոք, չշարունակվեց: Եվ մի ամբողջ ժողովուրդ պսակակիր դարձավ:



Ինքնատիպ ու գրավիչ են նաև մրգերի անձնավորումներն ու գունային և համային նկարագրությունները. պահենի խնձորները, որոնք «մարդու աչքերը կառնենին», և որոնց «հոտեն կգինովնայիք», շամանները, որ աշխարհի մեջ «ոչ մեկ տեղ կային, և ի՛նչ անուշ հոտ»: Մնձորին գրում է, որ նրանց նայելն արդեն մեծ բավականություն էր պատճառում. «Դեղին կըլլային, բայց ո՞ր դեղինը ըսեմ ձեզի՝ լուսինի՞ն, արևի՞ն, մեղրի՞ն, ոսկիի՞ն: Համբուրելդ կուգար: ... Անանկ ալ փափուկ, որ զգուշությամբ պիտի շոշափեիր, **կդողային** (ընդգծումը մերն է – Ա. Ա.) ափիդ մեջ» (Երկեր, էջ 335):

Խոսքը շարունակվում է որթատունկերի շարքերի նկարագրությամբ, որոնք հայտնվել են «բոցագույն գուլորշիի մը մեջ», որ «հողեն կառներ իր երանգները»:

Հապա թզենիները... «Մեր թզենիները գետինը, ավազներուն երեսը կտարածվին... Թուզերը չտեսնվելեն ու մնալեն այնքան հասունցած կըլլային, որ ձեռքդ դեռ դպցուցած՝ մեղրերը դուրս կպայթեին: Ի՛նչ անուշ էին...» (Երկեր, էջ 336):

Իսկ խաղողի տեսակները... «Մն՞ կուզեք՝ բաց սև, թունդ սև, դեղի՞ն կուզեք՝ խունկի դեղին, լույսի դեղին, ալ որը, կուզեք, ամենքն ալ կախվեր էին» (Երկեր, էջ 340):

Թթերը... «Նույն տեսակեն չեն անոնք: Անկուտը կա, կուտովը կա, կես ձերմակ կես կարմիրը կա, կլոր ու մանրուքը կա, բթամատի չափ ու իրարու փակած գույգերովը կան: Ժողովողները չեն ուտեր, հափրացեր են ուտելեն, շատ աղվոր մը, կամ խունկի պես կլոր մը պիտի ըլլա, որ հատ մը ուտեն» (Երկեր, էջ 342):

Հապա իրենց բներից դուրս սողացող օձերը, որոնք բազմաթիվ են ու բազմագույն. «Բնութիւնը իր բոլոր գոյները թափեր է անոնց վրայ: Դեղին օձեր կան, քրքումի գոյնովը: Սեփ-սեւեր կան եռացող կուպրի գոյնովը: Ոսկիի, շողակնի պէս վառողները կան կարմիր բիծերով: Խայտաբղէտները կան կանաչ ու կապոյտ օղակներովը, երկձիւղ բերաններով, **դժնէ աչքերով** (ընդգծումը մերն է – Ա. Ա.)..., սուր ատամնաշարով, ասեղի պէս վերջաւորող լեզուներով» (Մենք, էջ 348):

Մնձորիական այս պատկերները լի են գույների խաղերով, համի, հոտի, բույրի արթնացնող հրապույրներով: Մնձորիական պատկերների գրավչությունն այն է, որ գրողը կենդանուն, բույսին, ծառ ու ծաղկին վերագրվող հատկանիշները ներկայացնում է իրենց ինչպես բնական ու տրամաբանական, այնպես էլ անձնավորման դրսևորման մեջ. կենդանին ծեծ է կերել, ուստի **խռովել** է, ափամերձ բույսը գետի հոսանքների հար-

վածների մեջ է, ուստի **փեշերը վեր է բարձրացնում**, ծաղիկը շատ գեղեցիկ է, ուստի **ամաչում ու «պահվտում»** է, ծառն ամբողջովին միջատներով է պատվել, չի երևում, ուրեմն **«ժիժի»** է դարձել, և այսպես շարունակ: Եվ հենց սրա շնորհիվ է, հոգեբանական հավաստի պահ, կացություն ու վիճակ ստեղծելու շնորհիվ է, որ ընթերցողի մեջ հարց ու կասկած չի ծագում, թե ինչպես կարող է կենդանին խոսել, ծաղիկն ու թուփը՝ անաչել: Ավելին՝ Մնծուրու գրականությունը կարդալիս ընթերցողի մեջ պահանջ է առաջանում, որ նրանք՝ այդ ոչ ասուն կենդանիներն ու առարկաները, խոսեն և այն էլ շատ «խոսեն», մտածեն ու «քեն քաշեն», խռովեն ու «մախաուս» փարչերը կոտրեն:

Միայնակ ճանապարհ գնացող գյուղացին, բնական է, որ միտքը մի բանով պիտի զբաղեցնի, լռելյայն կամ բարձրաձայն անգամ խոսի շրջապատի իրերի, երևույթների ու կենդանիների հետ: Ըստ էության, նա խոսում է ինքն իր հետ: Եթե «ուրիշի» հետ խոսելու հարկը բացառենք, կան մարդիկ, որ, ինչպես Մնծուրու «Բարի լույս, Մարգար աղա» պատմվածքի հերոսը, «ինքնիբեն, ինչպես հանդիպած ամեն առարկայի հետ, խոսելու սովորություն ունեն...» (Երկեր, էջ 182): Այդպիսի շատախոս գյուղացու տիպ Մնծուրին կերտել է իր «Աշուն» պատմվածքում (Ոսկեհան քեռին): Այդպես է և Մնծուրու լավագույն գործերից մեկում՝ «Սուրբ Գևորգ» պատմվածքում, որում գործող անձինք երկուսն են, թեև նրանցից մեկը մարդ չէ, ավանակն է՝ Մնծուրու պատմվածքներում ամենից շատ հանդես եկող կենդանին, ինչը պատահական չէ:

Գյուղական կյանքի, իրականության ամենաբանող կենդանին ավանակն էր դարձել, որն ասես խորհրդանիշը, ընդհանրացված խտացումն էր այդ կյանքի գերագույն արժեքի՝ աշխատանքի:

Պատմվածքը սկսվում է գլխավոր հերոս Շիրինի ոչ այն է մենախոսությամբ, ոչ այն է երկխոսությամբ ավանակի հետ. «Այսօր, չես գիտեր՝ հետո ո՞ւր պիտի երթանք .... ըսե թե՛ դուն գիտե՞ս, ես ալ մինչև երեկ չգիտեի: Այդ տեղերեն հարյուր անգամ ալ չե՞մ անցեր, ո՞վ խելք կըներ»:

Պարզվում է, որ Շիրինը նախորդ օրը հեռավոր անտառում «բարդիի պես երկնցած» կաղնի էր տեսել, որից «ուրթ բեռ» ձմեռվա վառելավիայտ դուրս կգար. «Դուն ըլլաս՝ կկենա՞ս,- շարունակում է նա իր զրույցը մունջ կենդանու հետ,- Հայտի Շիրին, .... կացինդ սրե, կտրե, տուն կրելդ, վառելդ նայե» (Երկեր, էջ 82):

Եվ կենդանին ու մարդը ճամփա են ընկնում: Ճանապարհին հայտնված կրիայի պատճառով էջը կանգ է առնում: Շիրինը հեզնում է

կենդանուն վախենալու համար. «...իշուն ականջին մոտեցուց բերանը, խուլի մը ինչպես կպոռան, գոչեց,- տաշտի՛կ է, տաշտիկ, տաշտիկե՞ն ալ մարդ կվախնա: .... Ինչ պիտի ընենք աս քու վախկոտությունդ, չեմ գիտեր, որ ըսեմ, .... տաշտիկեն կվախնաս, հոսհոսիկեն կվախնաս, նեվիկեն կվախնաս, կովուրծուծեն կվախնաս, բզեզ մը թռի՛ գետին իջնա, թռի՛ գետնեն ելլե, կվախնաս: Աս ինչ անուշ է քու հոգիդ քեզի: Աղվեսի պոչիկեն ի՞նչ կելլե, խոտ մըն է, դու անկե ալ կվախնաս: .... մարդ իր ականջեն կվախնա՞: Ամեն աստծու օր աղբյուր տանելուս .... սիրտդ նետելով-նետելով գուռին կմոտենաս, ջուրին մեջ ականջներդ որ տեսնես, ալ կլմնաս, լեղիդ կպատռի, ալ ո՛ր ջուր պիտի խմես, առաջիդ ով կուգե ըլլա, կկոխես վրան, կփախիս: Աս քու ականջներդ քեզի ի՞նչ կերևան՝ չեմ գիտեր» (Երկեր, էջ 82): («Աշուն» պատմվածքում ևս էջը, աղբյուրի ջրում «տեսնելով» իր ականջները, ջուր չի խմում):

Մնծուրին ավանակին, վախկոտությունից զատ, վերագրում է հատկանիշներ, որոնք միայն մարդ արարածին են բնութագրական՝ «հոգու անուշություն», «սրտի նեղվածություն», «լեղին պատռվելու» զգացողություն:

Մնծուրին իր ընթերցողին «նախապատրաստում» է հետագա դեպքերին գյուղացու՝ ավանակին ուղղված խոսքերի միջոցով. «Գնալիք տեղերնիս չըսի, .... Քաջտանին լեռն է, սուրբ Գևորգն ալ ճիվ-ճիշտ դիմացը կիյնա: Ուրկե՛ ալ պիտի երթանք՝ ան ալ ըսեմ: .... Մինակ վերի չորս պատեխներուն առաջքը գեշ է: Գեշ ըսածս ալ՝ շատ դարվարի է, .... սահելու որ ըլլանք, դարվար անանկ ձոր մը կա, որ կտորնիս անգամ չմնար: Աղեկություն մը կա նը՝ հողը կակուղ է, ուր կոխես՝ ոտքդ կթաղվի: Ես ալ աղեկ մը փորեցի, դուրցուցի: .... Սուրբ Գևորգին ալ խոշոր մոմ մը խոսք տվի, առաջքը պիտի վառեմ: Սուրբ Գևորգը մեզ կպահե» (Երկեր, էջ 83):

Վերոհիշյալ մեջբերման մեջ նշանակալից դեր ունեն «գեշ», «դարվարի», «սահելու», «կտորնիս», «կակուղ» և «փորեցի» բառերը, որոնք և պատճառահետևանքային տրամաբանությամբ կանխորոշում են սպասվող դեպքերը:

Սկսվում է ձանապարհի դարիվար հատվածը: Ավանակը ծոմովելով է իջնում, վայր են ընկնում համետի վրայի իրերը՝ հոտոցը, կացինը, պարանը... Շիրինը բարկանում է, ավանակի նախկինում դրսևորված վարքի վերաբերյալ դեպքեր վերհիշում, անգամ փիլիսոփայական դատողություններ անում. «...ամեն մարդ քանի մեծնա խելք կբուրե, դուն ալ քանի մեծնաս՝ խելքդ կթոցնես» (Երկեր, էջ 83), զգուշացնում, թե

«գիտես, որ զարնելու ըլլամ՝ գեշ կզարնեմ, մեկ տեղդ կկոտրեմ»: Շիրինն այնքան է համոզված, որ խոսում է իրեն հասկացող արարածի հետ, որ սկսում է նրան «դասեր» տալ, խրատել, թե արդեն «քուռակ չես... դօձա էշ» ես, հիմարություններ չպիտի անել (ի դեպ, արաբերեն «հիմար» նշանակում է «էշ»):

Եվ քանի որ էշը «ավանակ» է, ոչինչ չի եզրակացնում Շիրինի խոսքերից: Շիրինը ծեծում է էշին. «Ա՛ն քեզի ճուկ ու մուկ քալել, ա՛ն քեզի թոթվըտիլ.... քեզի պես շանը շարական, երթաս, ապրիս բարբարական....» (Երկեր, էջ 83):

Շիրինը էշին հիշեցնում է նաև նախորդ ծեծերը, որոնցից մեկի պատճառն էլ նրա՝ դիտավորյալ («մախսուս») լեռան նեղ հատվածը գնալն էր եղել, ինչի հետևանքով կձիկները, փարչերը փշուր-փշուր էին եղել:

Շիրինը կտրում է ծառը, փայտը բարձում և բռնում հետդարձի ճամփան: «Ինտոր աղվոր-աղվոր եկանք, անանկ ալ պիտի երթանք», - շարունակում է Շիրինը խոսել ավանակի հետ: Երբ նորից հասնում են լեռան «գեշ տեղը», նա ձեռքերով պահում է բեռան հավասարակշռությունը («...մի վախնար, բան չես ըլլար....»), դիմում «քաջահաղթ գորավար» սուրբ Գևորգին. «...քեզի ամանաթ ենք .... ուխտս ուխտ է. ուզած մոռն՝ կերոնի պես մոմ մը պիտի վառեմ առաջքդ....» (Երկեր, էջ 85): Բայց հողը կենդանու սմբակների տակից սահում է, և էշը վրան բարձած փայտերով գահավիժում է անդունդ. «Շիրին գանկին մեջ պարապություն մը զգաց»: Նա իջնում է «մարդու ոտք չկոխած գահավեժին» հատակը, նայում ավանակի դիակին. «Գլուխը չկար: Համետը, փայտերը ո՛ր մնացեր էին, ստոնք ալ հայտնի չէին»:

Մնծուրին հասնում է իր պատմվածքի ամենախոր ու ողբերգական կուլմինացիոն հատվածին, պատկերում հոգեկան այն մեծ փլուզումը, որ տեղի է ունենում Շիրինի ներաշխարհում, ցույց տալիս գորովի, արտասանքի, զղջումի մի հոգեվիճակ, որտեղ շատ ուժեղ են հնչում վերջինիս խոսքերը. «Ճամբան քեզի ծեծեցի: Մեկը իս ծեծեր: Քեզի զարկած բիրս իմ վրաս կոտրտեր.... Արցունքներ սահեցան աչքերեն»: Եվ ապա. «Սուրբ Գևորգին նայեցավ: Մանիշակիգույն մը կար մատուռին շուրջը», այն է՝ համակ անտարբերություն, առավել ևս՝ անկարեկցության գունաստվերներով պատված մի մատուռ ու մի սուրբ, որոնց հանդեպ էլ ծառանում է Շիրինի զայրույթը. «Այնչափ ալ հույս դրի վրադ, այնչափ ալ աղաչեցի.... Ա՛ս էր պահածդ: Մոմ պիտի վառեմ քեզի, հա՛: Չեմ վա-

ներ: Ինչո՞ւ պիտի վառեն: Հոռոմ չե՞ս: Քենե՞ ալ բարիք կուգա» (Երկեր, էջ 85):

Որ սուրբ ասվածը կարող էր օգնել և չօգնեց, գյուղացի Շիրինը կասկած չունի: Նա հիասթափված է ամենազոր սրբից: Գյուղացու համար իր որոշակի, նյութական կորուստը շատ ավելին արժե, քան հոգևոր վերացական արժեքները: «...Քենե՞ ալ բարի՞ք կուգա» խոսքերն այդ իրողության հաստատումն են. «բարիք», այն է՝ նյութական կոնկրետ օգնություն և ոչ թե անտարբեր հայացք ու պատրանք: Եվ իրավացի էր սփյուռքահայ գրականագետ Վ. Ծովակը, երբ գրում էր. «Այս լեռնականին վերջին քանի մը նախադասութիւնները արդէն ամբողջ քերթուած մը կը յորինեն յայտնելու համար անոր ընդվզումը իր հաւատքի ուղիէն»<sup>14</sup>:

Մնծուրին, սակայն, իրականում բոլորովին այլ **մեղավոր** է հանդես բերում պատմվածքում՝ դրսևորելով իր գրողական տաղանդի կարևորագույն հատկանիշներից մեկը՝ քողարկված խոսքը: Տեղի ունեցած ողբերգության մեջ ո՛չ էջը մեղք ունի և ո՛չ էլ «Հոռոմ» սուրբը, այլ հենց ինքը՝ Շիրինը, որ փխրեցրել ու «դուրցուցեր» էր հողը, որը ծանր բեռան տակ չի դիմանում և փլուզվում է: Այդ դեպքում ինչո՞ւ է պատմվածքը վերնագրված «Սուրբ Գևորգ», մանավանդ որ ողջ շարադրանքում ընդամենը երկու անգամ է սրբի մասին խոսվում, որը, պարզվում է, որ այնքան էլ «սուրբ» չէ: Գյուղացի Շիրինն ամեն ինչ արել էր, որ փայտը տուն հասներ. ավանակի ձանապարհն էր հարթեցրել, նրան ջուր խմելու համար զուլալ աղբյուրի մոտ էր տարել, «համոզել», որ իր ականջներից չվախենա, սրբին կերոնի պես մոմ էր խոստացել... Բայց չարքաշ ու ողբալից կյանքը գյուղացու անբաժան ուղեկիցն է, նրա ձակատագիրը: Ողբերգությունը չէր կարող տեղի չունենալ, որովհետև իրականությունն է այդպես կառուցված հայ մարդու համար, և որքան էլ զգուշավոր, որքան էլ նախապատրաստված, որքան էլ թախսանձված, անխուսափելի է չարիքը, որ այս դեպքում հանդես է գալիս մատուռի պատուհանից անհոգորեն գլուխը հանած սուրբ Գևորգի տեսքով:

Մնծուրու գրական գործերի մեծ մասը գրվել է հիշողությունների հիման վրա: Ինչպես իրավացիորեն գրում է գրականագետ Վ. Գաբրիելյանը, «...բացառիկ հիշողությամբ նա վերհիշում է բոլոր մանրամասները: .... Զարմանալիորեն անջինջ էին մնացել գյուղում ապրած տարիների տպավորությունները: .... Եվ բացառիկ հիշողությունը մինչև խորին ծերություն օգնեց նրան պատմելու իր «բոլոր տեսածները»՝

14 «Մարմարա», Իսթանպուլ, 1958, մայիսի 1:

բնանկարի բոլոր գծերով ու գույներով, անուններով ու դեպքերով»<sup>15</sup>: Այդ հիշողություններն անկանգ են եղել, հաջորդել են միմյանց, խառնվել իրար, տարբեր երանգներով ու մանրամասներով լրացվել, իսկ երբեմն էլ՝ կրկնվել ու վերակրկնվել: Այդ պատճառով Մնծուրու տարբեր պատմվածքներում հանդիպում են մեկ ուրիշ գործից ընթերցողին արդեն ծանոթ ոչ միայն հերոսներ ու անուններ, այլև դեպքեր, դրվագներ, իրադարձություններ և անգամ մտքերի ու խոսքերի բառացի կրկնություններ:

«Բարի լույս, Մարգար աղա» պատմվածքում, օրինակ, Մնծուրին ներկայացնում է «Սուրբ Գևորգ» պատմվածքից մեզ ծանոթ հերոսներին՝ նույն Շիրինին և նրա ավանակին, որոնք, ինչպես «Սուրբ Գևորգում», վառելու փայտ բերելու համար լեռն են գնում: «Բարի լույս, Մարգար աղա» պատմվածքի սյուժեն ևս զարգանում է մարդու և կենդանու միջև «ծավալվող» գրույցի միջոցով. «- Հը՞... Չերթա՞նք... Երթա՞նք, երթա՞նք... Ականջներդ այդպես մի կախեր, աչքերդ բաց, որ երթանք .... մեր երկուքին մալը՝ եզը, թող կերը ուտե, արտ վարողը հայտնի է....» (Երկեր, էջ 182-183):

«Մարդացնելով» ավանակին՝ Շիրինը շարունակում է իր խոսքը. «Հելե հո, ըսեր է, մեր երկուքին մալը՝ եզը, թող կերը ուտե, արտ վարողը հայտնի է....» (Երկեր, էջ 183):

Եզին իր ու էջի «մալ» անվանելով՝ Շիրինն իրեն հավասար իրավունքներ (տիրոջ իրավունքներ) է վերագրում նաև ավանակին, քանի որ նա գյուղի բոլոր ծանր աշխատանքները կատարողն է և, ինչպես հենց պատմվածքի սկզբում է նշվում, «**ամեն օրվա**» աշխատողը, մինչդեռ եզը հանգստանալու ժամանակ է ունենում «**արտվարներից դուրս**»: Ավելին՝ Շիրինն ավանակի տատի մափին է հիշատակում և անգամ ավանակին իրենից բարձր համարում՝ նրան «**պապա**» հորջորջելով. զուլալ աղբյուրի մոտ հասած ավանակին նա ասում է. «Չե՞ս խմեր... ինչո՞ւ... խմե՛, խմե՛... մի մտմտար... տատիդ գե՞ղը գտեր էիր ասանկ ջուր մը, պապա» (Երկեր, էջ 183):

Այդուհանդերձ, հետագա շարադրանքում Մնծուրին «շեղվում» է մեկ անգամ արդեն պատմածից, և զարգացող դեպքերն այլ ընթացք են ստանում:

Մնծուրու մի շարք պատմվածքներում այս կամ այն կերպ խոսք կա ավանակի մասին, և դա պատահական չէ: Որ, ելնելով քարաժայ-

15 Գաբրիելյան Վ., Սփյուռքահայ գրականություն, Եր., 2016, էջ 318:

ռային տեղանքից, ավանակն այդ կյանքի մեջ ուներ իր կարևոր ու անփոխարինելի դերն ու մասնակցությունը, մենք արդեն անդրադարձել ենք, բայց կար և մեկ ուրիշ գործոն. ավանակը սուրբգրքային կենդանի է, հետևաբար ոչ միայն «հարազատ», այլև սիրելի իր դիմացկունության, հեզության, սակավապետության ու հնազանդության որակներով, գործոններ, որ միշտ էլ նախընտրելի են մարդու համար, ինչպես մարդկանց, այնպես էլ կենդանական աշխարհի հետ հարաբերություններում: Այստեղից էլ մարդու կողմից կենդանուն «մարդացնելը»: Այն, որ կենդանին կարող է ճանապարհի «դարվերության» պատճառով ծուռ-մուռ քայլել, մարդն ընդունում է որպես կամակորության արտահայտություն: «Հիշելու», «մտածելու», «խորհելու», «նազ անելու» հատկանիշներն արդեն մարդն է նրան վերագրում, որովհետև ուզում է բացատրել, պատճառաբանել կամ մեկնաբանել կենդանու արարքները, որոնք իրականում բնագրային են և կամ ակամա ու իրավիճակային:

Կա և երրորդ կողմ: Կենդանիների հետ «գրուցելով», նրանց «մարդացնելով»՝ գյուղացին նաև ինքն իրեն է բնութագրում, իր պատկերացումներն արտահայտում շատակերության (օրինակ՝ «Ջրհեղեղ» պատմվածքում), վախկոտության, խռովկանության, կամակորության և մարդկային այլ թերությունների վերաբերյալ:

Նույնը կարող ենք ասել և հակառակ իմաստով. անասունի մեջ գյուղացին որոնում ու տեսնում է նաև իրեն ցանկալի հատկանիշներ՝ աշխատասիրություն, դիմացկունություն, տունը պահելու ջանք, օգնական ուժ, կերակրող ձեռք: Եվ հենց դրա համար էլ նա եզին համարում է «տան սյուն» ու «տան հիմք», նրան ընդունում որպես «պայծառակերպություն» ու իր «պապ», նրան երազում տեսնում («Մեր կարմիր եզը»), իսկ կորած այծին գուրգուրանքով անվանում «խանրնս», «խաթունս» և այլն:

Մնծուրու պատմվածքների բնութագրական կողմերից մեկը հենց այդ մարդ-անասուն փոխհարաբերությունների անջրպետների վերացումն է, և միանգամայն ձիշտ է գրականագետ Գ. Սևանը, երբ գրում է. «...մնալով և լինելով սովորական էշ, եզ կամ կով, առօրյա, ընթացիկ իրենց կյանքում շատ են մոտ կանգնած մարդուն, այնքան մոտ, որ շփոթեցնում են քեզ, թե որտե՞ղ է վերջանում ասունի սահմանը ու որտեղ սկսվում... անասունը»<sup>16</sup>:

Մնծուրու վերագրումներն իրոք այնքան բնական են, որ երբ գրում է, թե ավանակները «Սուտեն կը գոցեն, կը բանան իրենց աչքերը, որպես թե

16 Սևան Գ., նշվ. աշխ., էջ 69:

յանցավոր չեն...» («Մաղիկանց էջը»), ընթերցողը տարակուսանքի մեջ է հայտնվում՝ այդ ավանա՞կն է իր բնական բնագոյով աչքերը բացուխուփ անում, թե՞ խորամանկության պատճառով են միտումնավոր «բացվում» ու «գոցվում» նրա աչքերը: Մնծուրին ցույց է տալիս, որ մարդ-կենդանի փոխհարաբերությունն այն աստիճանի սերտացման էր հասել այդ իրականության մեջ, որ ոչ միայն կենդանիներին էին «մարդացնում», այլև մարդկանց էին չափում կամ նմանեցնում կենդանիներին: «Տիկէ մամուն եզը» պատմվածքում, օրինակ, Մնծուրին հիմնավորում է մամու «Տիկէ» անվանումը. «...անունը Ռեհան էր, Տիկէ կը կանչէին, ճակատը, երկու բունքերը, աչքերը տիկէի՝ երինջի շատ նմանելուն...» (Մենք, էջ 344):

Ուշագրավ է «հարազատության» նաև մեկ այլ դրսևորում: «Մեր կարմիր եզը» պատմվածքում, երբ թոռը՝ Ակոբը, պապի պահանջով գնում է սար և գտնում իրենց եզին, որը մեծացել ու կազդուրվել էր անձանաչելիության աստիճան, կենդանին, ինչպես վկայում է Ակոբը, «Երազին մէջ պապուս երեսները լզածին պէս երեսներս լզեց» (Մենք, էջ 153):

Այդ նույն հոգեվիճակային երկվայամբ են ապրում Մնծուրու կերտած բոլոր գյուղացիները. իրենք գործ ունեն, շփվում ու ապրում են անասուն կենդանու՞, թե՞ ասուն արարածի հետ: «Ջրհեղեղ» պատմվածքում անընդհատ «**չլսել**» տալու ընդունակ և տիրոջ ամեն «ըսածները հասկցող» էջը չի քայլում, ուտում է նորածիլ խոտերը: Գյուղացին նրան հայհոյում է, ինչպես կհայհոյեր մարդուն ու նրա աստծուն. «Հէ՛յ քու պապուդ կողին... հէ՛յ քու հաւատքիդ...»<sup>17</sup>:

Բայց միայն Մնծուրու կերտած գյուղացիներն են անձնավորում իրենց կենդանիներին: Պարզվում է, որ հեղինակը ևս կենդանիների անձնավորման օրինակներ է տալիս: Օրինակ, երբ «Մաղիկանց էջը» պատմվածքում Մնծուրին պուժեից դուրս իր հեղինակային բնութագրերն է տալիս տարբեր կենդանիների, էջի մասին գրում է. «Երբ կշտանայ, իր փիլիսոփայական ականջները կը կախէ, աչքերը կը գոցէ: Չի քնանար, **կը խոկայ իր գերութեան, իր ճակատագրին վրայ** (ընդգծումը մերն է – Ա. Ա.)» (Մենք, էջ 368):

«Կապույտ լույս» գրքի երևանյան հրատարակության առիթով Մնծուրին իր գրականության մասին գրել է. «Բառերով նկարչություն ըրի... Գետին ձայնը ըսի: ... Մեղուներուն պարս ելլելը, երաժշտությունը ըսի: ... Մեղուները կլսե՞ն: Ես լսել տվի: ... Այգիներուն շերը՝ բանաստեղծությունը

---

17 Մնծուրի 3., Տեղեր ուր ես եղեր եմ, էջ 263:



ըսի: .... Խնձորներուն գինիի գույնը, .... շամամներուն փափկությունը, .... ափիդ մեջ դողալը, .... հոտը աշխարհը բռնելը ըսի...»<sup>18</sup>:

Այսպես անվերջ, այսպես լեցուն՝ թզերի, սալորների, խաղողների քաղցրություններով լեցուն, մարդկանց, կենդանիների խոսք ու գրույցով համեմված, ցորենագիրկ արտերի ու բերքառատ այգիների պարզևներով և բարի ու արարող գյուղացու նկարագրերով լի մի աշխարհ, որն անընդհատ այրել է գրողի «ներսը», «լցրել» նրան ու «ըսել» տվել, որ այլ բան չէ, քան կյանքի ձայն ու բաբախ, որ արևմտահայ գավառն է ու մարդիկ, որոնց բոլորին Մնձուրին փաղաքական Փոքրիկ Արմտան անունն է տալիս:

Արժրուն Ա. Ավագյան – գրադվում է նոր և նորագույն գրականության հարցերով: Հեղինակ է մի քանի մենագրությունների և գրքերի, բազմաթիվ գիտական հոդվածների:

Էլ. հասցե՝ a.avagyan@ysu.am

Summary

## PERSONIFICATION OF ANIMALS AND PLANTS IN HAKOB MNDZURI'S WORKS

Artsrun A. Avagyan

*Doctor of Sciences in Philology*

**Key words** - Mndzuri, Erzinka, Armtan, novel, peasant, field, garden, homeland, literary image, memory, animals, vegetation, personification, converse.

Hakob Mndzuri is one of the famous figures of the Armenian classical literature. Like many other Western Armenian miraculously rescued writers he has had a complicated and tragic fate. He dedicated his whole life to the people and nature of his native province, to the revival of the animal world and national customs and anything that is called homeland. Most of

18 Մնձուրի Հ., Կապույտ լույս, Եր., 1968, էջ 11:

Mnzuri's works are about the relationship of people with animals that describe everyday life, where the only goal is hard work, which human beings would not be able to accomplish without the help of domestic animals.

In his works, the writer shows that the working peasant accepts and treats the mule, ox, donkey, goat and other animals as equals, personifies them, engages in "conversation" with them, gives them "advice", teaches "wisdom", etc. Mnzuri also depicts the flora, with its help he describes the world in which people live, reveals the impenetrable beauty, folk and universal features of thinking. Mndzuri has only one purpose that is to evoke love and tenderness for the world and people that no longer existed but should live on for generations as eternal and timeless values.

Резюме

## **ОЛИЦЕТВОРЕНИЕ ЖИВОТНЫХ И РАСТЕНИЙ В ПРОИЗВЕДЕНИЯХ АКОБА МНДЗУРИ**

Арцрун А. Авагян  
*Доктор филол. наук*

**Ключевые слова** – Мндзури, Ерзнка, Армтан, рассказ, крестьянин, поле, сад, родина, литературный образ, воспоминание, животные, растительность, олицетворение, беседовать.

Акоб Мндзури – один из известных представителей западно-армянской классической литературы, который, как и ряд других чудом спасшихся от Геноцида писателей, имел трудную и трагическую судьбу. Он всю свою жизнь посвятил созданию образов людей, животных, описанию природы, традиций родного края, спасая таким образом от забвения все то, что называется Родиной. Большая часть произведений Мндзури – повествование об отношениях людей с животными, в них описывается повседневная жизнь, тяжелая работа, с которой человек не справился бы без помощи животных. В своих произведениях писатель описывает, как крестьянин общается с мулом, с быком, с

ослом, с козлом и с другими животными как с равными. С ними «говорит», «дает советы», «учит». Мндзури также изображает и растительный мир, с помощью которого описывает мир, в котором живут люди, раскрывает его красоту, народные и общечеловеческие черты мышления. У Мндзури одна цель – привить любовь к этому миру, к этим людям, которых больше нет, но они будут жить в следующих поколениях, как вечные ценности.

## REFERENCES

1. “Bagin”, Pēyрут‘, 2021, N 1 (In Armenian).
2. “Grakan t’ert’”, Yer., 1991, 1 marti, N 9 (In Armenian).
3. “Marmara”, Ist’anpul, 1958, mayisi 1 (In Armenian).
4. “Masis”, K. Pōlis, 1906, N 1 (In Armenian).
5. “Mehean”, K. Pōlis, 1914, 1-ē yunisi, N 6 (In Armenian).
6. **Gabrielyan V.**, Sp’yurk’ahay grakanut’yun, Yer., 2016 (In Armenian).
7. **Mat’evosyan H.**, Spitak t’ght’i arjev, Yer., 2004 (In Armenian).
8. **Mndzuri H.**, Kapuyt luys, Yer., 1968 (In Armenian).
9. **Mndzuri H.**, Yerker, Yer., 1986 (In Armenian).
10. **Mndzuri Y.**, Kṙunk usti kugas? Ist’anpul, 1974 (In Armenian).
11. **Mndzuri Y.**, Menk’, Ant’iliyas, 2018 (In Armenian).
12. **Mndzuri Y.**, Tegher ur yes yegher em, Ist’anpul, 1984 (In Armenian).
13. **Sevan G.**, Hakob Mndzuri, Yer., 1981 (In Armenian).